յանձնարարել է ինձ խնդրելու ձերդ գերազանցութեան՝ հաղորդել ինձ, այս օրւայ երեկոյեան ժամը 8–ից սկսած, 72 ժամւայ ընթացքում, ընդունո՞ւմ է արդեօք հանրապետութեան կառավարութիւնը օսմանեան առաջարկութիւններն իրենց բովանդակ ծաւալով:

Ես պէտք է աւելացնեմ նաև, որ այդ երեք օրւայ ընթացքում յարաբերութիւնները մեր երկու կառավարութիւնների միջև կարող են պահել բարեկամական բնոյթ, ա՛յն անառարկելի պայմանով, որ թիւրք զորքերի գործողութիւնները Կովկասի հարաւում որև է դիմադրութեան չհանդիպեն: Ընդունեցէք և այլն. Խալիլ»:

«Սահմանային սրբագրութիւն» կոչւածը հողային նոր պահանջ էր. թիւրքերն այժմ պահանջում էին Նախիջևանի ու Ախալցխայի գաւառները, անշուշտ, ազրբէջանցիների բացայայտ թելադրանքով:

Իսկ ի՞նչ էր կատարւում այդ միջոցին Թիֆլիսում:

Նոյն օրը, մայիս 26–ին, գումարւեց Սէյմի վերջին, ողբերգական նիստը, որի մէջ վրաց սոցիալ–դեմոկրատ կուսակցութեան պարագլուխներից Ի. Ծերեթելին արաւ հետեւեալ յայտարարութիւնը.

«Վրաց ժողովուրդը մնացել է մենակ. նրանից անջատւել են հայերը և կամովին՝ թուրքերը: Անդրկովկասի կեղծ անկախութիւնը խանգարում է նրան վարւելու ազատօրէն և իր լիազօր ուժերը գործադրելու իր անկախութիւնը պաշտպանելու համար:

Այս հանգամանքներում մեր պարտքն է ասել վրաց ժողովրդին. —Դու մնացել ես մենակ, չունես պետական կազմ, չունես քո պատւիրակութիւնը և, որքան էլ ծանր լինի խոստովանել, դու ապրում ես պատրանքներով. չկա՛ն նրանք, չկա՛յ Անդրկովկասի միութիւնը և, ուրեմն, եթէ ուզում ես փրկել քեզ, պաշտպանել քո շահերը, ինչպէս և քո հարեւանների շահերը, պէտք է ունենաս քո ինքնուրոյն պետական կազմը:

...Դժբախտաբար, գոյութիւն չունի այլևս անդրկովկասեան միութիւնը և փաստօրէն չկայ մի ընդհանուր ներկայացուցչական կենտրոնական մարմին, ուստի Սէյմը պէտք է յայտարարէ, թէ ինքը հրաժարւում է իր վրա դրուած լիազօրութիւններից ու ցրւի»:

Նախընթաց դէպքերի ուշադիր հետեւողը կը տեսնէ առանց դժւարութեան, թէ Ծերեթելիի յայտարարութիւնը սկզբից մինչև վերջ մտացածին փաստերի վրա է հիմնւած. ո՛չ հայերն էին «անջատւել» վրացիներից և ո՛չ էլ վրացի ժողովուրդը մնացել էր մենակ: Անդրկովկասի անկախութեան «կեղծութիւնը» կամ միութեան գոյութիւն չունենալը նոր երևոյթ չէր. նա նոյնն էր, ինչ որ և անկախութեան սկզբում: «Կեղծը» Ծերեթելիի մտայնութիւնն էր, այսինքն՝ վրաց վարիչ շրջանների մտայնութիւնը: Նրանք որոշել էին դուրս գալ Անդրկովկասեան միութիւնից և պատրաստ էին փնտռում՝ իրենց տգեղ վարմունքը արտաքին աշխարհի աչքին արդարացնելու համար:

Վրացիների պնդումի վրա Սէյմը ընդունեց մի բանաձև, որը ասում էր. «Ի նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղութեան խնդրում երևան եկան հիմնական տարակարծութիւններ Անդրկովկասի անկախ հանրապետութիւնը կազմող ազգերի միջև, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակաւոր իշխանութեան գոյութիւնը, Սէյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և յայտարարում չեղեալ իր լիազօրութիւնները»: